ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2026 թվականի բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման և 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերը :

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:

2026 թվականի բյուջետային քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

-անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի հարկման բազաների ճշգրտման արդյունքում բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ բարձրացնելով համայնքի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և նպատակային օգտագործել բյուջետային միջոցները, ակնկալելով՝

- եկամուտների և ծախսերի արդյունավետ կառավարում,
- համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքի աշխուժացում,
- սոցիալական տարաբնույթ ծրագրերի իրականացնում,
- բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակի և որակի բարձրացում,
- համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների աշխատանքի արդյունավետության բարձրացում,

- կապիտալ ներդրումներ կատարել համայնքի կազմում ընդգրկված նախադպրոցական ուսուցման, արտադպրոցական դաստիարակության կազմակերպությունների, մարզական և մշակութային օբյեկտների հիմնանորգման համար,

-կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային-կոմունալ տնտեսության բարեկարգման և ճանապարհային տնտեսության բնագավառներում,

-կապիտալ ներդրումներ կատարել համայնքի գյուղատնտեսության բնագավառում՝ մասնավորապես ոռոգման համակարգերի կառուցում և այլն:

Համայնքի 2026 թվականի զարգացման հիմնական ուղղությունները միտված են բնակչության կենսական շահերի ապահովմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ և բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանը և զարգացմանը, ինչպես նաև համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

Դիմում եմ համայնքի բնակիչներին, ավագանուն, համայնքապետարանի աշխատակազմին և համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝ իրենց ներդրումն ունենալու համայնքի 2026 թվականի բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային ու հասցեական օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման գործում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Կ. ՄԿՐՏՉՅԱՆ**